

## Դժբախտ պատահարներից ապահովագրությունն ակտիվ մարդկանց համար

### ՍՊՈՐՏ

### ԱԿՏԻՎ ՀԱՆԳԻՍ

### ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Լինեք օդում, ջրում, թե ցամաքին այս ծրագրով կարող եք Ձեզ ապահով զգալ:

Ծրագիրը գործում է Հայաստանի և Արցախի տարածքում:

Մեր ծրագիրը նախատեսված է հանգստի ակտիվ ձևերի սիրահարների և սպորտով զբաղվող անձանց համար:

Եթե դուք ակտիվ մարդ եք, մասնակցում եք արշավների կամ սիրում եք հանգիստն ակտիվ անց կացնել, զբաղվում եք սիրողական սպորտով կամ պրոֆեսիոնալ մարզիկ եք և մասնակցում եք մրցումների, կարող եք ունենալ 24 ժամյա ապահովագրական ծածկույթ:

Ծրագիրը հատուցում է դժբախտ պատահարի դեպքում առաջացած առաջնային բուժօգնության ծախսերը և միանվագ գումար է տրամադրում, եթե ապահովագրված անձը ձեռք է բերում հաշմանդամություն կամ մահանում է:

Այսօր մենք առաջարկում ենք մինչև 2 միլիոն դրամի ծածկույթ և ապահովագրում ենք սպորտի ցանկացած տեսակ, անգամ առավել վտանգավոր սպորտաձևերը:

Պայմանագիր կարելի է կնքել 1 օրից մինչև 1 տարի ժամկետով:

Առավել վտանգավոր սպորտաձևերի համար պայմանագիր կարելի է կնքել 3 ամսից մինչև 1 տարի ժամկետով:

Առավել վտանգավոր են համարվում հետևյալ սպորտաձևերը՝

- մոտոմրցարշավներ, ավտոմրցարշավներ, լեռնային հեծանիվ, բոբսլեյ, ռաֆթինգ, թռիչք օդապարհիկով, պարապլան, պարազլայինգ, անկարգելային սպորտ, ժայռամագլցում, սառցամագլցում, փարկուր, տարզանկա, ռազմական զբոսաշրջություն, որս, քարանձավներ իջեցում, մրցույթային կամ ոչ նախապատրաստված ուղիներով լեռնադահուկային սպորտ (անուբորդինգ, սքիբորդ), սքեյթբորդինգ, մարտարվեստներ եւ ըմբշամարտ (այկիդո, կառատե, ձյուդո, քունֆու, տատկվանդո, տիեկվոնդո, ուշու, ջիուջիցու, բոկս, բռնցքամարտ, քիթ-բոբսինգ, սամբո, ձեռնամարտ:

Պայմանագիր կարող է կնքել թե ֆիզիկական անձը և թե իրավաբանական անձը: